Մեզ մոտ գեոմա ցածր ե աշխատանքի արտադրողականութիւնը, բայց նա աճում ե: Աշխատանքի արտադրողականութեան աճումը մեր տնտեսութիւնն առաջ շարժող գլխավոր ուժն ե դարձել: Մեզ մոտ վոչ սակավ դեռ ևս վատ ե աշխատանքային կարգապահութեան բանը, բայց այստեղ ել մենք հաջողութիւններ ունենք: Վերջին տարիներս մենք մի քանի անգամ կըր ճատել ենք ձեռնարկութիւնների բանվորների և ծառայողների գործաւթումները (պրոդուկտներ) Յեւ վոր ծաւրումների պես յերևույթներին մենք պետք ե այժմ լիովին վերջ տանք: Սակավ չե, վոր մեզ մոտ 7 բանվորական ժամից դործարանում աշխատում են 5-6 ժամ, իսկ յերբեմն ել ավելի քիչ: Բայց դրա համար բանվորներից և բանվորուհիներից ավելի մեծ չափով պատասխանատու յենք մենք՝ ղեկավարներս, վոր չենք կարգապահել արտադրութեան կադմակերպումն ինչպես հարկն ե: Ամբապնդվում են նաև մեր կոլտնտեսութիւնները՝ կոլտնտեսականի այն գիտակցութեան արագ աճման հետ միասին, թե անհրաժեշտ ե իսկական աշխատանքային կարգապահութիւն և յուրջ հոգատարութիւն հասարակական-կոլտնտեսային շահերի մասին: Սոցիալիստական մրցութիւնն ընդգրկել ե միլիոնավոր բանվորների և կոլտնտեսականների և հանգիստում ե մեր յերկրի աշխատավորների գիտակցութեան աճման ամենացայտուն արտահայտութիւնը:

Աշխատավորների ամբողջ կենցաղում ևս արմատական փոփոխութիւն ե կատարվել դեպի լավ:

Արդեն հինգերորդ տարին ե, վոր մեզնում գործադրութիւնն չկա: Թերևս մեզ համար արդեն հեշտ ե մոտանալ բանվոր դասակարգի այդ պատուհասը, սակայն ԽՍՀՄ սահմաններից դուրս գտնվող բանվորների կյանքը մեզ ամեն որ հիշեցնում ե, թե վորքան ենք հեռու անցել կապիտալիստական ճեղղ կարգից: Մեզնում աճում ե բանվորների աշխատավարձը, և այժմ, հազի քարտեքը մերանալուց հետո և խորհրդային ուղղութեամբ ամբապնդման կապակցութեամբ՝ ել ամերի յե բարձրանալու նրա ունալ բովանդակութիւնը: Պետութիւնը բազալիկ հոգալութիւն ե ցույց տալիս բանվորների սննդին և արդտեղ մենք զգալի նվաճումներ ունենք: Աճում են բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրութեան բոլոր տեսակները, նեռառալ տնտեսութիւններն ու հանդստյան տները, վորոնցից բանվորները վոչ մի տեղ չեն ոգտվում, քացի խորհրդային Միութիւնից:

Կոլտնտեսութիւնների ամբապնդման հետ միասին սուր կերպով դեպի լավն ե փոխվում գյուղի աշխատավորների կենցաղը: Անցալ տարվա վերջերքին ԽՍՀՄ, Ուկրայինայի ու Բելոռուսիայի 83·000 կոլտնտեսութիւններում կատարած հետազոտութիւնը ցույց ե տվել թվերով՝ թե ինչպես ե վեր ու վեր քարձրանում կոլտնտեսային գյուղը: Բովական ե տեղ, վոր այդ 83·000 կոլտնտեսութիւններում, վորտեղ մի կոլտնտեսային ծուխին 1932 թվին տրվել ե 5,5 ցենտներ հացահատիկ, 1934 թվին տրվել ե 10,9 ցենտներ: Ամերիկայում յերկու անգամ: Աճում ե կոլտնտեսութիւնների և մյուս արտադրանքն ու նրանց դրամական յեկամումները: Ամերի ու ավելի շատ կոլտնտեսականներ են սխում ասդել ունեւոր և կուլտուրական կյանքով: Հարցրեք այդ մասին թեկուղ Կաբարդինո-

Բարկարյան մարդիկ և, իհարկե, վոչ միայն այդ մարդիկ կոլտնտեսականներին: Այն ժամանակ յերբ կապիտալիստական յերկրներում և խմբերկալիզմից կեղեքվող զաղութներում ու կիսազաղութներում հարյուր միլիոնավոր գյուղացիներ տառապում են ճշնամածից և բազմաթիվ գյուղական աշխատավորներ սովամահինում, մեր գյուղերում վերջ է տրված աղքատությանը ու աղինավ աշխատավորի համար բաց է ճանապարհը՝ դեպի լավ կյանք:

Մեր յերկրում կենցաղային պայմանների արմատապես բարելավման ցուցանիշ է հանդիսանում աշխատավորների առողջության ամրապնդումը:

Մեր բժշկական հիմնարկությունների ունեցած ընդլայնված թերություններով հանդերձ չի կարելի աշխատավորների համար նրանց ներկա նշանակությունը համեմատել մինչհեղափոխական անցյալի հետ: Բախական է ասել, վոր բանակ կանչվող բանվորների բժշկական քննությունը Մոսկվայում, Լենինգրադում, Մոսկվայի և Խվանովյան մարզերում, Գորկու յերկրում և Ուկրայինայում ցույց է տվել, վոր նրանց միջին կշիռը վերջին 6-7 տարում ավելացել է մեկ ու կես—յերկու կիլոգրամ, իսկ կրծքի վանդակի շրջապատը՝ մեկ ու կեսից մինչև յերկու և կես սանտիմետր: Թող այդպիսի տվյալներ տան և արտասահմանի դրության մասին: Բայց հենց մենք ել պետք է ունենանք պնդակազմ մարտիկներ՝ խորհուրդների իշխանության համար (ծափահարություններ):

Կուսակցությունն ու կառավարությունն անհրաժեշտ են գտել այս տարի զգալիորեն ավելացնել հիվանդանոցների համար արվող ծախսերն ու ավելացնել ամբողջ բժշկական անձնակազմի աշխատավարձը: Մենք ցանկանում ենք, վոր առողջապահության գործն ավելի արագ շարժվեր, վոր աշխատավորների առողջությունն ամրապնդվեր, վոր մեղնում ավելի շատ խոր-

հրդային գյուղացուներ ծնվեյին (յերկարաուն ծափահարություններ):

Մենք առաջ ենք ընթանում, սակայն մեր կենցաղային կարիքները դեռ հեռու յեն իսկական բավարարումից: Մեղնում, որինակ, դեռ շատ ճեղքվածքներ կան բնակարանային գործում և դա ամենալուրջ ուշադրություն է պահանջում: Մեղնում հետ է մնացել կոմունալ տնտեսությունը և միայն քաղաքների մի վորջր մասն է արդեն, Մոսկվայի գլխավորությամբ, վոր ինչպես հարկավոր է, գործի յեն անցել: Հաճախ պահատում են նույնիսկ ամենահարկավոր ապրանքներն ու մթերքները թե քաղաքում և թե գյուղում: Սակայն չի կարելի մոռանալ, վոր մենք շատ հնարավորություններ ունենք՝ այդ ամբողջ գործը բարելավելու համար: Մենք դեռ բավականաչափ հմտությամբ չենք ոգտագործում այդ հնարավորությունները: Մեղ դրան չեն սովորեցրել առաջուց: Այժմ մենք նոր կյանքի կառուցման մեծ ուսումն ենք անցնում: Մենք չափազանցություններ չենք ուղում և չենք ասում, թե ՈՍՁՄ տրդեն հարուստ յերկիր է, սակայն խորհրդային Միության աշխատավորները դիտեն, վոր հարստանում է մեր յերկիրը:

Վորպեսզի պրոլետարական հեղափոխության կողմից մեր առաջ գրված խնդիրների բարձրության վրա գտնվենք, անհրաժեշտ է կուլտուրական շինարարության բարձր վերելք: Մեր ուժը նրանումն է, վոր դա զարձեկ է աշխատավորների լայն մասսաների գիտակցությունը: Մասսաներում աճում է կուլտուրայի ծախվը, ձգտումը դեպի գիտություն և գեղարվեստ, մեծ քանակությամբ նոր ուժեր ու տաղանդներ արթնացնելով: Աճում է խորհրդային Միության ժողովուրդների կուլտուրան, —աճում է խորհրդային հիմունքով, աղգային գույների հարուստ հանդերձանքով: Ինչ ել վոր քարոզեն նաղիտնալիստական ու դեր

նացիոնալիստական անդրադեպ թեորիաները, մեր ամենավերջին գյուղացին անգամ տեսնում է, վոր դրոնված է դեպի ազգային կուլտուրաների ծաղկումը առնող ուղին՝ ինտերնացիոնալիզմի դրոշի տակ նոր կյանք կառուցող խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունում (ծախահարուքյուններ) :

Մենք աչքներս չենք փակում այն բանի նկատմամբ, վոր մեր դպրոցները լցված են և պետք է արագություն բերել տանք յերկու և ավելի ևս՝ յերեք հերթափոխություններ լինող զբաղմունքներին: Մենք աչքներս չենք փակում նույնպես և մեր բարձրագույն դպրոցական հաստատությունների թերությունների վերաբերմամբ: Բայց մենք դեռենք, վոր վերջին ժամանակաշրջանում բանն այնտեղ զգալիորեն բարելավվել է և մենք պետք է ել ավելի ուժեղ աշխատենք նույն ուղիով շարժմամբ: Մենք պետք է ուժեղացնենք մեր հոգածությունն ուսուցչի և գիտնականի, ինչպես և առանց դեպի մի դյուտարարի վերաբերմամբ:

Անցած ժամանակաշրջանում՝ խորհրդային իշխանություն մեծ հաջողություններից պետք է համարել հին ինտելիգենցիայի շարքերում դեպի սոցիալիզմ յի դաժ յրջադարձը: Առանց տատանումների և մի տեղից մյուս փախչելու և վերադարձաբեր չի կատարվել այդ բեկումը: Սակայն վերջերս հին ինտելիգենցիայի, ուսուցչության, վերջապես՝ գրողների և գեղարվեստի աշխատողների հին մասսան, և ձեզ համար հառկանայի կլինի խորհրդային գրողների Մոսկվայում գումարված անցյալ տարվա համագումարի քաղաքական նշանակությունը. համագումարի, վոր մեր ինտելիգենցիայի այդ դեպի յավր կատարած բեկումն արտացոլեց:

Սակայն թերևս վրձնչի հետ համեմատել չի կարելի կուսակցության և խորհրդային իշխանության այն հաջողությունը, վոր ունենք նոր ինտելիգենցիա, և առանձնապես՝ նրա տեխնիկական կադրեր ստեղծելու

դործում: Արդեն առաջին տարին չե, վոր չառ դործաբանների ու կուլտետետությունների բախտն են սնորհում այդ խորհրդային ողում աճած և ջանասիրությամբ դործնական փորձ կուսակող յերիտասարդ կադրերը: Մի շարք տարիների ընթացքում, կուսակցությունն այդ խնդրի վրա յե կենտրոնացրել բանվոր դասակարգի ուղադրությունը: Յեվ թեև գլխավոր արդյունքն առաջիկայում է լինելու, այնուամենայնիվ նոր սերունդն այժմ արդեն մեծ ուժ է հանդիսանում արտադրության ապարիդում: Լեմինը ցայտուն կերպով խոսել է այն մասին, թե կապիտալիզմն ինչպես է «ճնշել, սպանել ու դուրս նետել» ժողովրդի մեջ յեղած ընդունակություններն ու տաղանդները: Դրա համար ել մեր բանվորներն ու գյուղացիները տապալեցին կապիտալիզմը: Յեվ այն ժամանակ ել դեպի կուլտուրան ճանապարհ բացվեց մասսաների համար և ամենից առաջ՝ մեր յերիտասարդության համար:

Ընկ. Ստալինը մեր ներկա խնդիրները մոտեցնում է հետևյալ նշանավոր խոսքերով. —

«Բանի վոր մենք սովորել ենք դնահատել տեխնիկան, ժամանակն է ուղղակի ասել, վոր այժմ գլխավորը՝ տեխնիկային տիրապետած մարդկանց մեջ է... Պետք է պահպանել սմեն մի ընդունակ և հասկացող աշխատողի, պահպանել և աճեցնել նրան: Մարդկանց պետք է խնամքով և ուղադրությամբ աճեցնել, ինչպես այդպեպն է աճեցնում իր սիրած պաղապու ծառը»:

Այս ցուցմունքներից պարզ է, վոր տեխնիկայի և յինարարության մյուս ճյուղերի համար նոր կադրեր պատրաստելու վերաբերմամբ մեր արածը շատ քիչ է և մենք ել ավելի համառություն պետք է զբաղվենք այդ խնդրով: Սակայն այժմ մենք ունենք գլխավորը, — բանվորա — դյուղացիական իշխանությունը, վորը

պատրաստ ե այդ դործն ամբողջ թափով առաջ շար-
տել:

Դա նշանակում է, արդյոք, թե բոլոր դժվարու-
թյուններն արդեն անցել ենք, թե հասել ե յերաժշտու-
թյան քաղցր հնչյունների տակ, այսպես ասած՝ «հան
գիտտ ու սահուն որորվելով» անհոգ հանդստանալու
ժամանակը: Վոչ, բանը բոլորովին այլ կերպ է: Ան-
հոգությունն ու ինքնահոգն աշխատանքում՝ ձեռնադու
յե միայն մեր դասակարգային թշնամուն:

Սոցիալիզմը հաղթել է. սակայն դեռ յերեկ զգալի
յեր բուրժուական տարրերի դիմադրության բացար-
ձակ Ֆրոնտը: Այժմ ջախջախված թշնամին չի համար
ձակվի բացարձակ պայքարի յեղնել: Նա չեզոքացված
է ու վերորմելի, սակայն լեցուն կատաղի վոխով և
պատրաստ է ոգտվելու ամեն մի զենքից: Ինչքան ան-
հուսալի յե դառնում խորհրդային իշխանության թըշ
նամիները դրությունը, նույնքան նրանք ափելի քիչ են
խորշում պայքարի միջոցների ընտրության մեջ: Այդ-
պիսի պայմաններում վտանգավոր է հեղափոխական
դզաստության թուլացումը:

Թշնամին դաժան է ու ճարպիկ. նա պատրաստ է
ամեն կերպ ծաղուկել, նույնիսկ մեր կուսակցության
բարեկամ ձևանալ, վերսպիսի թուլացնի նրա դզաս-
տությունը և հարված տա դիխին ու սրտին: Մենք մեր
շարքերից կորցրինք պանծալի մարդկանցից մեկին,
Սերգեյ Միքոնովիչ Կիրովին, վոր ընկալ թշնամու
ձեռքից՝ միմիայն կոմունիզմի դործին, խորհրդային
իշխանության դործին նվիրված լինելու համար: Պրո-
վոկատորական յերկյերեսանիության անարդ «առաջ-
նորդի» դաստիարակած գինովյեվականների ապիտակ
զվարդիական վիժվածքներն եյին այդ վոճրագործու-
թյունը կազմակերպողները: Թշնամու համար միև-
նույն է, թե ով կլինի իր կամքը կատարողը, -- թող
դա լինի թեկուզ կոմունիստական տոմսի տակ թաղ-

նված վոճրագործ, վորի հետևը թաղնվել էյին մի
բուռն անակցբունք և բարձր պաշտոնների սիրահար
կարյերիստներ: Այդ բոլորի պատասխանը կարող է
լինել միայն մեր ուժեղացրած հեղափոխական դզաս-
տությունը՝ դասակարգային թշնամու վերաբերմամբ:

խորհրդային իշխանության թշնամիներն ըստ յի-
րույթին ցանկանում եյին Լենինգրադում իրենց կա-
տարած վոճրագործությամբ չփոթություն առաջացնել
մեր շարքերում: Միթե՞ թշնամիների այդ հաշիվները
ցույց չեն տալիս մասսաներից նրանց բոլորովին կտըր
ված լինելը, յերկրի կյանքից կատարելապես կտրված
լինելը: Բանվորների ու դյուղացիների միլիոնանոց
մասսաները Լենինգրադի կրակոցին պատասխանեցին
բացառիկ ուժով, իրենց շարքերը խորհրդային իշխա-
նության շուրջը, ընկ. ՍՏԱԼԻՆԻ շուրջը համախմբելով
(բուռն, յերկարատև ծափահարություններ, վոր փոխ
վում են ովացիայի: Բոլորը վտափ յեմ կանգնում):
Սրանից ավելի մեծ քաղաքական ցույց հոգուտ մեր
դործի և ի վնաս թշնամիների՝ չի կարելի յերեակա-
յել:

Այսպես ուրեմն, մեր յերկրի սոցիալիստական
հիմք կառուցելով և սոցիալիստական շինարարու-
թյամբ անմիջականորեն ընդգրկելով աշխատավորների
ճնշող մասսան, ՆԵՊ-ական յերկրից վերակառման,
դարձել է սոցիալիստական յերկիր, անցնելով ՆԵՊ-ի
մի շարք ետսպներ, և այժմ դեռ վերջնականապես չի
վերջացրել նրա վերջին շրջանը: Ժողովրդական տնտե
սության վերելքի հետ միասին՝ ուժեղ կերպով բարձ
րանում է աշխատավորների կենցաղային պայմանե-
րն ու կուլտուրան: Բանվորներն ու դյուղացիական-
կոլտնտեսային մասսաները կուսակցության շուրջն են
համախմբված ավելի քան յերբեք: Արագությամբ ա-
ճում են սոցիալիզմ կառուցողների նորանոր կադրեր՝
աշխատավորների և մանավանդ կանանց շարքերից,

յերիտասարդության շարքերից, մեր մեջ որինտեղան հարատու թյուն աւ մեծ հուսիւր առաջացնելով:

Ահա փաստեր, վորոնց հիման վրա մենք պետք է հիմնական յեղրակացություններ հանենք մեր քաղաքականության և ներկա շրջանի մեր խնդիրների մասին:

Վորպեսզի չկրկնեմ այն բոլորն ինչ վոր արկներն կերպով բոխում ե այդ փաստերից և իմ բոլոր ասածներից, և վորպեսզի մեր յեղրակացություններում ուղղորդությունը կենտրոնացնենք գլխավորի, այսինքն «տեխնիկային տիրապետած մարդկանց վրա», յես կողմովն ընկ. ՍՏԱԼԻՆԻ մետաղագործներին ուղղած հայտնի խոսքերից.

«Խնամքով աճեցնել ու վորակավորել մարդկանց, նրանց ճիշտ դասավորել և կազմակերպել արտադրության մեջ, աշխատավարձն այնպես կազմակերպել, վոր ամրապնդի արտադրության վճռական ողակները և մարդկանց մղի դեպի բարձրագույն վորակյալություն,—ահա թե ինչ ե հարկավոր մեզ արտադրական տեխնիկական կադրերի բազմամարդ բանակ ստեղծելու համար»:

Ընկ. ՍՏԱԼԻՆԻ այս կարճառոտ խոսքերում մի քանի հիմնական յեղրակացություններ են արված մեր ամբողջ աշխատանքի համար:

Առաջինը՝ «խնամքով աճեցնել ու վորակավորել մարդկանց» (ՍՏԱԼԻՆ): Ձնայած այն բոլորին, վոր մինչև այժմ ե արված՝ դա մոմենտի ամենահրաժայական խնդիրն ե:

Երկրորդ հնգամյակի բոլոր տնտեսական խնդիրների կենտրոնում ե դրված ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցման ավարտումը: Մենք արդեն քիչ աշխատանք չենք տարել արդյունաբերության, գյուղական տնտեսության, տրանսպորտի տեխնիկական վերակառուցման ասպարի

դում: Արդեն քիչ նոր տեխնիկա, նոր արտադրություններ, նոր սարքավորումներ չենք մտցրել ժողովրդական տնտեսության մեջ: Սակայն դա միայն մի փոքրիկ մասն ե այն բանի, ինչ ցանկանում ենք ունենալ տեխնիկայի տնտեսական վերջնականապես վերակառուցված յերկրի տնտեսության մեջ: Խորհրդային Միության տեխնիկական վերակառուցման գործում մենք իսկական հեղափոխական տեմպերով ենք առաջ ընթանում: Այդպես վարվելով մենք միայն կատարում ենք աշխարհիս վրա առաջին պրոլետարական պետության հիմնական պատմական պարտավորություններից մեկը:

Մյուս կողմից՝ ահա արդեն մի քանի տարի յե, վոր կուսակցությունը դրել ե տեխնիկային տիրապետելու և նոր մեքենաներն ու արտադրությունները յուրացնելու խնդիրը, վորպես վճռական գործնական խընդիր, վորովհետև մենք ուղում ենք, վոր այն բոլորը, վոր մենք ենք կառուցում՝ լավ աշխատի, վոչ թե վատ, այլ ավելի լավ՝ քան կապիտալիստների մոտ: Դրանց իրականացման համար մեծ աշխատանք ե ծավալված մեր աչքի առաջ: Աճում են ու մեծանում նոր ինժեներների, գյուղատնտեսների, տեխնիկների, արտադրականների, կուլտուրայի և ուրիշ կադրերը: Աճում են աշխատանքին նոր մոտեցում ունեցող մարդիկ և քչերը չեն նրանց շարքում նոր հասարակություն կառուցողներ, վոր վերջնականապես նվիրված են սոցիալիզմին: Դրա հետ միասին՝ շատ ավելի արդյունքներ են ստացվում նաև մասնագետների հին կադրերի աշխատանքից: Առանց տեխնիկային տիրապետած նոր մարդկանց՝ այժմ արդեն մեզնում անհընար ե վորեւէ լուրջ արտադրություն. առանց նրանց չի աշխատում և չի կարող աշխատել վոչ մի գործարան: Կան և այնպիսի ձեռնարկություններ, ինչպես և նոր արտադրություններ, ինչպես, որինակ՝ «Ինթե-

տիկ կառուցուելի արտադրությունը, վորոնց դարձա-
ցումը գրեթե անմիջապէս նոր տեխնիկական կադրերի
ձեռքում ե գտնվում:

Յեւ չարկավոր ե, վոր այդ դործը, — ժողովրդա-
կան տնտեսության բոլոր ճյուղերի սոցիալիստական
վերակառուցման արժատական խնդրի համապատաս-
խան մարդիկ աճեցնելու ե վորակյալ դարձնելու դոր-
ծը, այժմ ամէլի լայն ֆրոնտով առաջանա: Պետք ե,
վոր այդ կադրերի տեխնիկական վորակը պատշաճ առ
տիճանի բարձրանա ե յետ չմնա ոտարյներէրյա վո-
րակյալ մասնագետներէ: Վորակյալությանը, այսին-
քը՝ դիտական — տեխնիկական նախապատրաստության
դործին մենք այժմ պարտավոր ենք այնքան ուշադրու-
թյուն դարձնել, վորքան չարկավոր ե, վոր տեխնի-
կա-տնտեսական տեսակետից իրոք հասնենք ու անց-
նենք կապիտալիստական յերկրներէց ե դրան հասնենք
ամենակարճ ժամանակամիջոցում: Այդպիսի կադրեր,
մանավանդ կուսակցական ե անկուսակցական յերիտա-
սարդության շարքերէց այդպիսի կադրեր աճեցնել,
նրանց դարձնելով իրենց դործի նվիրվածներ ու սո-
ցիալիզմի դիտակից կառուցողներ, — այդպէս աճեցնել
մասնագետներին նոր բանակ, — դրանումն ե մեր անելի
քը: Դրա համար չի կարելի ուժ ե միջոցներ խնայել:
Այժմ վոչինչ այնպէս արագությամբ չի հանի իր ծախ-
սերը, ե վոչ մի ուրիշ բան այնպէս պտուղ չի տա,
ինչպէս այդ խնդրի հաջող լուծումը:

Յերկրորդը՝ «ճիշտ դասավորել ու կազմակերպել
նրանց (մարդկանց) արտադրության մեջ» (ՍՏԱԼԻՆ):
Այստեղ ձեռակերպված են մեր կազմակերպչական խըն-
դիրները: Կուսակցության 17-րդ համագումարը հատ-
կապէս այդ խնդիրներին բացառիկ ուշադրություն ե
դարձրել: Կազմակերպելու ուժը հասկանալի յե բոլշե-
վիկներին:

Գործնական շինարարության վերջին ժամանակվա

ինչ հարց ել վոր վերցնենք, կտեանենք, վոր կոնսուլ-
ցությունն իր ուշադրությունը կենտրոնացրել ե կադ-
մակերպչական պրոբլեմներին վրա, աշխատանքի մե-
թոդներին, ապարատի կառուցման վրա, մարդիկ ընտ-
րելու, կատարման վերահսկողության վրա: Այդ ել
նշանակում ե ուժերը ճիշտ դասավորել: Վերցնենք
Դոնբասի որինակը: Կուսակցության ե կառավարու-
թյան առջ մեծ խնդիր եր կանգնած, — աշխատել
ճիշտ կատարել մեքենայացման խնդիրները ե դրանով
ե՛լ քարածուխի ստացումը պատշաճ բարձրության
վրա դնել: Յերկար ժամանակ այդ դործը կրիայի քայ-
լերով եր առաջ ընթանում: Վճռական ժամին՝ կու-
սակցությունը կրակը կենտրոնացրեց Դոնբասի տըն
տեսորդանների, վորպէս գլխավոր խոչնդոտի՝ աշխա-
տանքի գրասենյակային — բյուրոկրատական մեթոդի վը-
րա: Այդ բանի համար «չին-երից» վրմանց կարգին
բաժին հասավ, մեթոդացվեցին վոչ քիչ այնպիսի պա-
տուհաս-ղեկավարներ, վորոնք սովորած լինելով հին
ձևով աշխատել, վորձում եյին կողմնակի ճանապարհ-
ներով մի կողմը թողնել աշխատանքի վերակառուց-
ման հարցը: Մի լավ հարվածելով կանցելյարիտունե-
րին ու բյուրոկրատներին ե բանվորների շարքերում
մեծ աշխատանք տանելով տնտեսական աշխատանքում
յեղած կանցելյարիտական — բյուրոկրատական մեթոդ-
ների դեմ, մենք խոչոր հաջողություններ ունեցանք:
Դոնբասը լայն ճանապարհի վրա գտնու յեկավ, այդ
բանն ապացուցելով անցյալ տարի քարածուխի պլանը
լրովին կատարելով:

Սակայն յիրը կուսակցությունը կանգ չի առել
տնտեսական արարատի թերությունները խիստ քննա-
դատելու առաջ, ապա իր ամբողջ հետեւյալ դրույթով,
թե՛ ժամանակն ե տիրապետել տեխնիկային, ժամանա-
կըն ե աշխատել ըստ եյության ե վոչ թե կուրորեն
համարտարով արարատին, — կուսակցությունն ասել ե,

մեր դեկապար կադրերը և ամենից ամառ՝ կոմունիստներն ընդունակ են և կարող են տիրապետել հանձնված գործին, յեթե նրանք լրջորեն անցնեն այդ գործին, յեթե նրանք այդ նոր աշխատանքում կանգ չառնեն առաջին դժվարությունների առաջ: Քննադատելով թեւրուխուններն ու անխառն խարազանելով պետական ապարատում յեղած բյուրոկրատիզմը՝ կուսակցութիւնը միաժամանակ վստահութիւն ու թարմութիւն ե ներթափել սոցիալիզմ կառուցողների շարքերի մեջ, մեր կոմունիստական կադրերի մեջ: Կուսակցութեան այդ դրույթը շատ բանում ե ողնել թարմ ուժեր վեր հանելու և կուսակցական ու անկուսակցական նոր կադրեր առաջ քաշելու, միաժամանակ ել ողնել և հին կադրերի աշխատանքի վերականգնմանը:

Սասնիցա հետո պարզ են վերջին ժամանակաշրջանում վոչ միայն շատ տեղական, այլև կենտրոնական որդաններում կատարած վերակառուցման հիմունքները: Սակայն այդ աշխատանքը դեռ ավարտված չի կարելի համարել: Մենք հետադայում ել պետք ե լուրջ ուղադրութիւն նվիրենք արտադրութեան կադմակերպչական հարցերին, ինչպես և ամբողջ պետական արտադրութի կադմակերպչական հարցերին: Այժմ, յերբ նվաճված են բոլոր հիմնական նախադրաշարքերը ժողովրդական տնտեսութեան, ինչպես և աշխատավորների կենցաղի ու կուլտուրայի բազմակողմանի վերելքի համար, գործի ճիշտ կադմակերպումը—կոմունիստների քլիսովոր պարտականութիւնն ե, ղեկավարութեան քլիսովոր խնդիրը:

Յերբորդ, «աշխատավարձը կադմակերպել այնպես, վոր նա ամբացնի արտադրութեան վճարման ողակները և մարդկանց մղի դեպի բարձրագույն վորա կալորումը» (ՍՍՍՐՆ):

Այդտեղ խոսքը վոչ միայն կադրերի մատին ե, այլ և բանվորների ամբողջ մասսայի մատին: Աշխատավարձի նշանակութիւնն ընդգծելը, այժմ մեր ամբողջ

չինքնարութեան բացառիկ աշխատանքն ինդիւրն ե, մասնավոր, վոր մեզ մոտ մաստակարարման բաշխողական սխառնում գոյութիւն ունեցող շաղկապութեանը հաճախ հանցալից—արհամարհական վերաբերմունք են առաջ բերել դեպի աշխատավարձի կադմակերպման հարցերը:

Կադմակերպել աշխատավարձը նշանակում ե նրան արտադրութեան վերելքի հիմնական լծակ դարձնել, դա նշանակում ե վերջնականապես վերջ տալ այնպիսի կարգերին, յերբ տնտեսական այդ գործը վերահանձնարարում եր յերկրորդական անձերի, իսկ ինքը հետաքրքրվում եր միմիայն «աշխատավարձի ֆոնդի» ծախսման թղթային պլանով: Կադմակերպել աշխատավարձը նշանակում ե ճանաչել իր բանվորներին, խմայնալ նրանց վորակավորումը, դիտեալ արտադրութեան վճարման տեղամասերը և թե ում պետք ե խթանել առաջին հերթին: Աշխատավարձի աղբյուրի կադմակերպումն անհնար ե առանց տիրապետելու արտադրութեան հիմունքներին, առանց հատկանայու արտադրական տեխնիկայի կարեւորութիւնը: Կադմակերպել աշխատավարձը նշանակում ե բանվորական ամբողջ կոլեկտիվի ջանքերն ուղղել դեպի ճիշտ հունը, նշանակում ե վերնապատկել իրենց ուժերը:

Վերջին յերեք տարիները բանվորների հիմնական կադրերը գործարաններում ու կառուցումներում կայունացել են: Սակայն նոր բանվորների վիթխարի բանակի արտադրական փորձառութեան ամբողջ աճի հետ միտաին, մենք դեռ քիչ գործ ենք արել, վորպեսզի գործարանային ամուր կադրեր կուխնք և վճարման տեղամասերն արահուստ, ինչպես հարկն ե, իրենց գործը, իրենց մեքենասարքն ու իրենց արտադրանքութիւններն իմացող բանվորներով: Չպետք ե մոռանալ ի այն, վոր շատ անգամ բանվորների հին կադրերին հարկ ե լինում նորից սովորել, քանի վոր նոր տեխնիկան նրանց քիչ ե հայտնի:

մերձընթացին իշխանութեան աշխատատեղի քաղաքացիականութեանն ուղղված ե բանվորների ամբողջ մաս առաջի կյանքի մակարդակի բարձրացմանը, այդ, այսպես ասած, նրա հիմունքների հիմունքն է: Բայց այդ հիման վրա միայն ուղղորտունիստ շարժառիւթները կարող են մեր քաղաքականութեանը փոխարինել աշխատատեղի մանր բուրժուական հավատարման քաղաքականութեամբ, հաշվի չառնելով աշխատանքի արտադրողականութունը, հաշվի չառնելով աշխատողի վորակը: Բոլշևիկյան քաղաքականութեանը փճոտկան պայքար է պահանջում «հավատարման» կողմնակիցների դեմ, վորպես դատակարգային թշնամու ռոտուկակողներին, վորպես սոցիալիզմի թշնամի տարրերին դեմ: Սոցիալիզմի գլխավոր խնդիրը վերջ ի վերջո հանդիսանում է արտադրողականութեան այն աստիճանի բարձրացումը, վոր անմատչելի չե հատարակական վորուե ուրիշ իրավակարգի: Սոցիալիզմն առանց դրան հաղթել չի կարող: Դեպի աշխատատեղի կազմակերպումը ցույց տված աղայական արհամարհական վերաբերմունքն իրապես հանդիսանում է վերադարձ դեպի մանր բուրժուական հավատարման քայլին միացորդները: Գիտակից բանվորներն այդ բանին այլ կերպ են վերաբերվում: Մենք պետք է հասնենք այն բանին, վոր ամեն բանվոր հատկանա, վոր աշխատանքի բարձրագույն արտադրողականութեան համար, ավելի պատասխանատու տեղամասում աշխատելու համար, լավագույն վորակավորման համար պետք է ավելի բարձր աշխատատեղի լինի. այն ժամանակ մեր արդյունաբերութունն ել ավելի արագ կանի, առատ ապրանք կլինի, և կհահի ամբողջ բանվոր դատակարգը:

Ընկ. ՍՍՍԻՆԸ 17-րդ համագումարում բացատրեց, թե ինչու տվյալ ժամանակաշրջանում կոլտնտեսային շինարարութեան հիմնական ձևը հանդիսանում է գյուղատնտեսական տրտելը և վոչ թե կոմունան, վորին հասնելու համար դեռ մենք այնքան չենք տեղ:

Պարզ է, վոր կոլտնտեսականների անձնակառ շահագործման շրջանում այժմ գոյակցում է կոլտնտեսային ընդհանուր շահի հետ միայն արտելում և հենց դրանով միայն կարելի չե առաջ շարժել կոլտնտեսային գործը: Այժմ կոլտնտեսութունը (արտելը) և վոչ թե կոմունան և վորոշում գյուղական տնտեսութեան վերելքը և այդ ուղին և միայն տանում դեպի սոցիալիզմի հաղորդութունը գյուղում՝ աստիճանով առանձին կոլտնտեսականի և ընդհանրապես կոլտնտեսութեան շահերի այնպիսի գոյակցութուն, վոր առաջ է շարժում կոլտնտեսային կարգը և արագորեն բարեկալում կոլտնտեսականի կյանքը: Կոմունաների մանր բուրժուական հավատարման քայլի հրաժարվելով միայն և արտելակոլտնտեսային տնտեսութեանն անցնելով՝ կոլտնտեսականների ամբողջ մասան մտել և կարգապահութեան ամրացման, քողղ տնտեսական վերելքի և աշխատանքի արտադրողականութեան բարձրացման հունը: Հավատարման քայլին արտադրութեանների դեմ պայքարը կոլտնտեսութեաններում այժմ ել կարևորագույն խնդիր է, ինչպես և ամեն մի այլ պայքար կոլտնտեսականների գիտակցութեան մեջ յեղած կարևորագույն մը նացորդներին դեմ:

Յեկ այժմ, յեր ՆԵՊ-ն արդեն վոչ թե նոր, այլ տնտեսական հին քաղաքականութուն է դարձել և մեր յերկիրն իր հիմքով և ըստ իր բնակչութեան փճական մեծամասնութեան սոցիալիստական է, արտադրութեան մեջ անձնական շահի և հատարակական ոգուոյ ճիշտ գոյակցման հարցը կենտրոնական հարց է դառնում սոցիալիզմի կառուցման գործում: Մեր խնդիրն է՝ ապահովել աշխատավորների նյութական փճակի ընդհանուր վերելքը և դրա հետ միասին արտադրութեան կարևորագույն ողակների աշխատանքը, աշխատանքի բարձր արտադրողականութեանը և առանձին աշխատողների բարձր վորակի խրախուսել աշխատավարձը բարձրացնելով ու դրա վրա կառուցել աշխատանք

վարձի մեր քաղաքականութիւնը: Այս խնդրի ձեւա-
բանումը լավագոյն յերաշխիք և այն բանի, վոր մենք
հաջողութեամբ կհաղթահարենք մեր ճանապարհի ա-
մեն տեսակի արդեւորները:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը մեր յերկրը
դուրս բերեց համաշխարհային կապիտալիզմի սխտե-
մից և նոր և՛ բաց արտա՝ համաշխարհային պատմու-
թյան մեջ: Այն յերկրը, վոր ցարկիզմի իշխանութեան
ներքո «Ժողովուրդների բանտ» էր, 1917 թվի հոկտեմ-
բերյան որերից սկսած համաշխարհային պատմութեան
Փորձոստ դարձաւ:

«Ամենքին անհայտ» բռնախնդրը, — բուրժուազիան
այդպէս էր ցանկանում դարձնել նրանց, — «հանկարծ»
ուժ դարձան և այժմ վոչ վոք համաշխարհային առա-
ջադնութեան գործին այնպիսի ողնուկուն չի հասց-
նում, վորպիսին մեր բռնախնդրի կուսակցութիւնը,
բանախոս-գոյուղացիական իշխանութիւնը (ծախահա-
րաքշումներ):

Այդ պատմական ժամանակաշրջանում բանն այդ-
պէս շուտ յեկաւ: Այսուհետև կարելի՞ չե արդեւոք սպա-
սել, վոր խորհրդային իշխանութեան հանդեպ միջնե-
կութեան վերաբերմունքը կունենան ինչպէս քանխորհելը,
այնպէս էլ բուրժուաները, ինչպէս կողանտեսականնե-
րը, այնպէս էլ կուլակները, ինչպէս դադութիւններ աշ-
խատողները, այնպէս էլ իմպերիալիստները:

Արդեւ, մենք, ընդհանրապէս, չենք տեսնում,
վոր կապիտալիզմի և նրա մնացորդների կողմից մեր
սեփական յերկրում շարունակ նոր ու նոր հարձակում
ենք են գործվում խորհուրդների իշխանութեան դեմ:
Խորհրդային իշխանութեան հակառակորդները՝ բուր-
ժուական և մենչևիկ — սոցիալիստական մամուլից
պէս հաճախ ասում են. — վոչ, Խորհրդային Միու-
թիւնը սոցիալիզմի յերկիր չե, այլ ինչ վոր միանգա-
մայն այլ բան: Իբրև միեկնարան նրանք կրկնում են

«պետական կապիտալիզմի» հերքութեանը — հերքու-
թանքներ, վորոնց իրենք իսկ չեն համատու: Յեւ ո՞վ
կհամատու դրան, վոր կա կապիտալիզմ — առանց կապի
սոցիալիստների, կապիտալիզմ — առանց ճգնաժամերի,
կապիտալիզմ — առանց գործադուրկների: Ըստ յերևույ-
թին պարունայք կապիտալիստները շուտով իրենց մա-
մուլից դուրս կքշեն այդ բոլոր շարակաւտներին իբրև
սոցիալիզմի մասին խառն հիմար ձևով դարարտողնե-
րի: Մենք մեր կողմից միմիայն մի բան կցանկանա-
րենք, վոր բանալորները, ինչպիսի տարածութեամբ էլ
ներքեք մեղմից բաժանված լինեն, ալիքի շատ գիտե-
նային Խորհրդային Միութեան մասին, նոր կյանքի կա
ուղեման մեջ մեր ունեցած բոլոր դժուարութիւնների
ու հաղթութիւնների մասին: Այժմ մենք այդ ցանկա
նում ենք առասիւղ ևս նրա համար, վոր «Ռուսաստա-
նը սոցիալիստական և դարձել»:

Մեր պետական ապարատը, վոր իր բոլոր թերու-
թիւններով հանդերձ մեզ համար հնարաւորութեւն և
ապահովում սոցիալիստական շինարարութեան վեհ պը-
րանը կենսագործելու, մեր թշնամիները գիտում են
վորպէս բոլորովորապէս վերաշինք, վորն իբր հա-
մատեղելի չե առանձին մարտկանց ու տաղանդների
զարգացման յահելի հետ: Բայց բոլորովորապէս արդ
«քննադատութեւնը» միմիայն վարագուրում և թշնա-
միների իսկական նպատակը — քաղաքի խորհրդային
իշխանութեան ապարատը, վոր մեր յերկրի հակա ոլն
տեսութեւն և կառավարում՝ ի շահ այն աշխատա-
վորների, վորոնք միմիայն են այն բոլոր խոշոր ու
մանր տերիկներին, վորոնք առաջ իրոք «դարգանում
ենին» և ապրում իրենց բախականութեան համար, բայց
զոռապիսի ու բանալորների հալիւն, աշխատաւոր-
ների շահագործման հալիւն: Մենք լավ ենք հասկա-
նում, վոր բոլորովորապէս դեմ մղած իսկական պայ-
քարն անամալատելի չե սոցիալիզմի հաղթանակի համար
մզած սրայաբրից և վոր խոշոր արտագրութեան դար-

դասցման հաջողութիւններն հետ միասին ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում, և մասսաների կուլտուրականութեան առման հետ միասին՝ բոլորովրդատիպը հաղթահարելու մեր հնարավորութիւնները վիթխարի չափով աճում են: Աշխատավորներին էլ ամէլի մոտ լաւելի դեպի մեր որդաններն աշխատանքը և կուսակցութեան ղեկավարութեամբ էլ ամէլի ակտիւ դարձնել նրանց մասնակցութիւնը՝ մեր ապարատում յեղած բոլորովրդատեան ազաւազումների դեմ մղած պայքարում—դրա մեջ ենք տեսնում մենք մեր կարեւորագույն խելիքներէից մեկը, գլխեկարով, վոր աշդ ճիշտ ուղի յետոյ յետոյ կատարելու հաղթանակի արագացման համար:

Բուրժուական յերկրներում, վորտեղ փոքրամասնութիւնը՝ չահագործողները տիրապետում են մեծամասնութեան վրա, աշխատավորների վրա, պետական իշխանութեան որդանները ձգտում են մասսաներից թաքցնել իրենց դատարարագոյն խեղճան դերը, վորպես կատարելի պահպանման որդան՝ ընդդէմ աշխատավորների շահերի: Բուրժուական տոկոսը և պարլամենտարիզմի զանազան ձևերով ծածկել իր գիտատուրան և մասսաներին հեռու պահել իր վարչական ապարատից: Մինչև իսկ Ֆրանսիայի տիպի պետութիւններում, վորոնք բացահայտ կերպով նրա համար են, վոր աշխատավորներին կատարելատեան կրնիկ տակ ստրատիկ ու հարստակութեան մեջ պահեն, բուրժուազիան յերկրորդութեամբ իր գիտատուրայի ժանիքներն և թաքցնում, վորպես թե ընակչութեան դառնազան տեսակի ներկայացուցչութեան վարադուրով: Յեւ աշդ հաւանալի յետ: Բուրժուական մեթոդով ղեկատուութեան, մինչև իսկ դեմոկրատական ծածկոցի տակ, աշխատավորներին աչքին կորցնում և իր վորեն հեղինակութիւնը, վորպես աշխատավորների համար վերջնականապես խորթ ու թշուամի իշխանութիւն:

Միմիայն պրոլետարիատի գիտատուրան, վոր իր մեջ մարմնացնում և բանկորների ու գոլդացիների մի

ութիւնը բանկոր դատարարի ղեկավարութեամբ, աշխատավորների իշխանութիւնն է. կա գիտատուրա, վորից ամենեկին յերկուդ չունեն աշխատավորները, բայց վորն ընդհակառակը, իր ուժը տեսնում է կառավարութեան բոլոր գործերի մեջ աշխատավոր մասսաներին ներգրակելով: Արդպիսի գիտատուրան միայն փշրելով բուրժուական մեքենան, և նրա հիմունքը՝ մասնավոր սեփականութիւնը—և գործի անկյունը դարձնելով հասարակական սեփականութեան դարապետան հոգում աշխատավորների շահերի, միայն աշդպիսի գիտատուրան կարող է նոր հասարակութիւն կառուել, հասարակութիւնն առանց դատարարների վոր հնարավորութիւն կտա խեղճան բարձր մակարդակի հասցնել ժողովրդի բարեկեցութիւնն ու կուլտուրան: Մենք պատրաստ ենք խոստովանելու, վոր մեր իրականարդում դեռ մանր ու խոշոր շատ պակասութիւններն կան, բայց նրա հիմունքը—հասարակական սեփականութիւնն ու աշխատավորների իշխանութիւնն—մեծ ու անպարտելի ուժ է (ծախաւորը յայնմ) :

Մեր խորհուրդները — պրոլետարիատի գիտատուրայի մարմնացումն են: Նրանք վորպես աշխատավորների իշխանութեան որդան պետք է հոգան ամենից առաջ հասարակական, պետական ու կոոպերատիւ կորսնեմութեան սեփականութեան և սոցիալիստական որինակաւութեան շահերի պահպանման մասին: Նրանք իրեն իշխանութեան որդան պետք է աշարթորեն հակեն և յետոյի հարմարեն թշուամ գործատեաներին և մի աժամանակ գգայնութիւնն ու խնամքը զույց տան դեպի կենդանի մարդիկ, դեպի ամեն մի աշխատավոր:

Այս բոլորից ակնհայտ է, թե մենք ինչպես պետք է հոգանք խորհուրդների աշխատանքը բարեկաւելու մասին:

Մեզ պետք է, վոր էլ ամէլի ծախալենք խորհուրդներէ սեկցիաների, ձեռնարկութիւններն պատգամա-

վորական խմբերի, չեֆային խմբերի և հիմնարկու-
թյունների սոցիալապետական աշխատանքը, վոր
խորհուրդներն ել ավելի կապվեն բանվորների մասնա-
ների հետ: Մեզ պետք է, վոր քաղաքային խորհուրդ-
ները՝ կատարելով իրենց պարտականություններն ին-
քուստրացիան և տեխնիկական վերակառուցման քաղա-
քականությունը կիրառելու գործում, ուժեղացնեն ին-
քենց հոգատարությունը բանվորների ու բանվորուհի-
ների կենցաղային ու կուլտուրական կարիքներին վերա-
բերմամբ, աշխատեն բարելավել առևտուրն ու բնակա-
րանային գործը, բարձրացնեն դպրոցներին ու հիվան-
դանոցների գործը, բարելավեն կինոն ու դրադարան-
ները, կարգի բերեն բաղնիքներն ու ֆիզիկուլտուրային
հրապարակները և անշեղ կերպով բարձրացնեն բան-
վոր յերխտասարդությունը, սոցիալիզմի աչք մեծ ուժի
աշխատանքային վորակավորումն ու քաղաքական դաս-
տիարակությունը:

Մեզ պետք է, վոր մեր դյուդական խորհուրդները
ինչպես հարկն է իրենց աշխատանքը կապակցեն կոյ-
տնտեսային դյուդի վերելքի հետ, կոլտնտեսություննե-
րի ու խորհրդանոցությունների միջոցով ուժեն դյուդա-
կան տնտեսության վերելքին և կոլտնտեսականների
կուլտուրական աճին, դարդացնեն հիվանդանոցային և
դպրոցական գործը, գրքով, յրադրով ու կինոյով ա-
պահովեն լայն մասսաները, ճանապարհներ ու հեռա-
խոսներ անցկացնեն դյուդում և կրկին ամեն կերպ հո-
գան մեր ասպարան կազմող կոլտնտեսային յերխտասար-
դություն աշխատանքային վորակավորում և քաղաքա-
կան գիտակցություն տանդելու մասին:

Խորհուրդներին աշխատանքը քաղաքում ու դյու-
դում հատցնելով այն բարձրության, վոր նրանք արժա-
նի լինեն սոցիալիստական պետությանը, մենք կամրա-
պնդենք խորհրդային իշխանությունն ու կապահովենք
մեր ամբողջ գործի կատարյալ հաջողությունը:

Խորհրդային սահմանադրությունն ընդունված է

դեռևս 1918 թվին: Լենինի ձեռքով գրված խորհրդա-
յին սահմանադրությունն աշխատավորների դրոշ հան
դրացալ հանուն սոցիալիզմի մղած պայքարում: Այդ
դրոշի տակ մենք վիթխարի առաջխաղացումն ենք կա-
տարել: Խորհրդային սահմանադրությունն իր հետա-
գա դարգացումն ստացալ Խորհրդային Սոցիալիստա-
կան Հանրապետությունների Միությունը կազմակեր-
պելիս ընկ. ՍՍԱԼԻՆԻ ձեռքով ԽՍՀՄ «Հիմնական որեն-
քը» մշակած բնագրում: Այդ ժամանակից սկսած սոցի-
ալիզմի հաջողություններն ահագին փոփոխություն
մտցրին մեր յերկրի հասարակական ամբողջ կառուց-
վածքում, բայց այդ փոփոխությունները դեռ չեն կա-
րողացել անդադառնալ մեր սահմանադրության բնա-
գրում: Այդ պատճառով էլ խորհրդային սահմանադրու-
թյունը պետք է այնպիսի վերամշակման յենթակ-
վի, վոր նրա մեջ ամրացնվեն Հոկտեմբերյան հեղա-
փոխության այնպիսի նվաճումները, ինչպես կոլտնտե-
սային կարգի տանդումը, կապիտալիստական տարրե-
րի վերացումը, սոցիալիստական սեփականության
հաղթությունը Խորհրդային Միության մեջ: Մեր սահ-
մանադրության մեջ պետք է արտացոլեն նույնպես
խորհրդային պեմոկոստիզմի դարդագրման խնդիրները
մինչև վերջը, պետությունը կատարարելու գործում
աշխատավորության մասնակցության ինչպես հին,
սոյնպես ել նոր ձևերը: Ինչպես անդրադարձնել նոր,
սոցիալիստական հասարակության համոզությունները
մեր սահմանադրության մեջ և նրա հիմունք դարձնել
խորհրդային դեմոկրատիզմի հետագա բազմակողմանի
դարդացման համար և աչքպիսով վորոշել սոցիալիստա-
կան ամբողջ յինարարություն հեռանկարը — աչքալի-
սին է մեր խնդիրը:

Անհրաժեշտ է, վոր խորհուրդների 7-րդ համագում-
արն այն հարցի մասին ստի իր հատու խոսքը:

Դեփար չե համարանալ բանվորների ու դյուդացիների
համբապետության տնտեսին դրությունը, ճանի ա:

խարհում գոյնություն ունի խորհրդային միակ պետությունը: Բայց յեթե կապիտալիզմի տիրապետող ծավալում է ամենի ու ամենի ուժեղ հակառակությունը և դրանց շարունակ յերևում է, վոր նա այլև այնպես ամուր չի կանգնած իր սեփական վտանգերի վրա, ասլամենք մեր բարեկամներին կարող ենք առել, վոր խորհրդային Միությունն այժմ առավել քան յերբեք մեծ է իր անտեսական հզորությունը և աշխատավոր մասնակցությունը խորհրդային իշխանության շուրջը համախմբվածության (ազակալից ծափահարություններ):

Այս բանում մենք պարտական ենք ամենից առաջ մեր կուսակցությանը, վոր սոցիալիստական շինարարությունն ամբողջ հոգին է: Մեր կուսակցությունը մարքսիզմի — լենինիզմի ծածանալող դրոշմով առաջ է դնում, վորդուրեք կոմունիզմի համար մարտնչողներին, միլիոնավոր մասնակցներին առաջնորդում է մեր ՄՏՍՄԻՆԸ և մենք հաստատապես գիտենք — այդ ուղին տանում է դեպի մեր կատարյալ հաղթանակը (բուռն, յերկարատև ծափահարություններն ովագիայի յեմ փոխվում: Բայրը վտտի յեմ կանգնում: «Կեցցե մեծ Ստալինը: Ուռա՛»: «Կեցցե ընկ. Մոլոտովը»):

ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔԸ

(ԸՆԿ. ՄՈՒՈՏՈՎԻ ՏՐԻԲՈՒՆԱՅԻ ՎՐԱ ՀԱՆԴԵՍ ԳՆԱԸ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՄԱՎՈՐՎՈՒՄ Ե ՐՈՒՌՆ, ՏԵՎԱԿԱՆ ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)

Ընկերներ, համադրված կառավարության հաշվետու ղեկավարման առթիվ տեղի ունեցած յեղևթները ցույց տվին խորհրդային Միության բոլոր հանրապետությունների ու շրջանների պատվիրակությունների վարարելապետ համերաշխ լինելը կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության հետ (բուռն ծափահարություններ): Այդ պատճառով էլ յես չառ կարճ կյանքավաճառ:

Այսօր մեր թերթերում հրապարակված է հեռագիրը Տոկիոյից, վոր հաղորդում է ճապոնական պարլամենտում արտաքին գործերի մինիստր պ. Հիրոտայի վերջին յեղևթների մասին՝ հատկապես ճապոնիայի և խՍՀՄ հարաբերությունների հարցի վերաբերմամբ: Այդ ճառերում պ. Հիրոտան հայտարարում է, թե ինքը «մտադիր է մեծագույն չափով խրախուսելու բարեկամությունը խՍՀՄ հետ և արագացնելու խորհրդաճապոնական հարաբերությունների խաղաղ դարգացումը՝ կրկնապատկելով իր ջանքերը մյուս չլուծված պրոբլեմները լուծելու համար»: Մենք վողջունում ենք այդ հայտարարությունները, վոր համապատասխան են մեր դիտավորություններին:

Սակայն պ. Հիրոտան բացի դրանից կարևոր և հա-
մարել կանգ առնել այն պաշտպանողական միջոցա-
ռումների վրա, վոր ինչպես հայտնի յե մենք ստիպ-
ված ենք յեղել գործադրել Հեռավոր Արևելքում մեր
սահմանների պաշտպանության համար: Դրա հետ մի
ասին նա հիշեցրել և Պորտսմութի դաշնագիրը, վոր
կնքվել է ռուս — ճապոնական պատերազմից հետո՝
1905 թվին:

Նայենք Պորտսմութի դաշնագիրը: Այդ դաշնա-
գրի 2-րդ հոդվածը սահմանում է, վոր «Թյուրիմացու
թյունների վորևե առթից խույս տալու համար պաշ-
տանադրվող բարձր կոգմերը (այսինքն Ռուսաստանն
ու Ճապոնիան) ձեռնապահ են մնում ռուս-կորեյական
սահմանի վրա ռազմական վորևե այնպիսի միջոցա-
ռումներից, վոր կարող է սպառնալ ռուսական կամ
կորեյական տերրիտորիայի անվտանգությանը»: Նը-
ման պարտավորություններ են պարունակում 3-րդ
հոդվածում Սախալին կղզու յերկու մասերի միջև ըն
կած սահմանի վերաբերմամբ:

1925 թվի հունվարի 20-ին Ճապոնիայի հետ մեր
կնքած Պեկինի համաձայնության հիման վրա Պորտս-
մութի դաշնագիրը Ճապոնիայի ու ՌՍՀՄ միջև պահ-
պանում է իր պարտադիր ուժը և մինչև ներկա ժա-
մանակը:

Ամենքին հայտնի յե, վոր ՌՍՀՄ խստորեն պահ-
պանում է Պորտսմութի դաշնագրի բոլոր վորոշումնե-
րը, ինչպես և ընդհանրապես իր հանձն առած միջադ-
պային բոլոր պարտավորությունները: Մասնավորա-
պես այդ վերաբերում է և 2-րդ և 3-րդ հոդվածնե-
րից բղխող պարտավորությանը՝ չամբացնել Կորեյա-
յին ու Հարավային Սախալինին վրից մեր սահմաննե-
րը:

Հունվարի 22-ին և 25-ին, պ. Հիրոտան իր ճա-
ռերում արտահայտվել է Պորտսմութի դաշնագրի

այդ պարտավորությունը տարածելու և խորհրդա-
մանջուրակա՞ն սահմանի վրա: Սակայն խորհրդա-
մանջուրակա՞ն սահմանի նկատմամբ Պորտսմութի դաշնա-
գիրը, ինչպես հայտնի յե, վոչ մի խոսքով չի շոշա-
փում պաշտպանողական ամրությունները:

Սակայն պ. Հիրոտան ակնարկելով Պորտսմութի
դաշնագրի վերոհիշյալ հոդվածներն, ըստ յերևույթին
մոռացել է այդ դաշնագրի մի քանի այլ հոդվածների
գոյությունը. որինակ այդ դաշնագրի 2-րդ հոդվածը
վորոշում է Ռուսաստանի ու Ճապոնիայի պարտավո-
րությունները. — 1) «Ինտրովին և միաժամանակ դա
տարկել Մանջուրիան, բացի այն տերիտորիայից, վո
րի վրա յե տարածվում Լյուդունի թերակղզու (Պորտ
Սերտուր և Դայբեն) վարձակալությունը» և 2) «Զի-
նաստանի բացառիկ կառավարման վերադարձնել Ման
ջուրիայի բոլոր մասերը լիովին ու ամբողջ ծավալով»
վորոնք հաշտության դաշնագրի կնքման մոմենտին դը
րավված եյին ռուսական ու ճապոնական զորքերով:

Սպա 7-րդ հոդվածի համաձայն Ռուսաստանն ու
Ճապոնիան պարտավորվել են «Մանջուրիայում իրենց
պատկանող յերկաթուղիները չահագործել բացառա-
պես առևտրական ու արդյունաբերական նպատակնե-
րով, բայց վոչ վորևե կերպ ռազմադիտական նպա-
տակներով», ըստ վորում ծանոթություն կա, վոր
այդ սահմանափակումը չի վերաբերում Լյուդունի
թերակղզու յերկաթուղուն:

Վերջապես Պորտսմութի դաշնագրի 3-րդ հոդվա-
ծին լրացուցիչ հոդվածը սահմանում է, վոր Ռուսաս-
տանն ու Ճապոնիան կարող են Մանջուրիայում իրենց
յերկաթուղագծերի պահպանության համար ամեն մի
կիլոմետրին վոչ ավելի քան 15 մարդ պահել, ըստ
վորում հատուկ ծանոթություն կա, վոր այդ նպատա-
կի համար պահնորդներ թիվը պետք է վորոշվի «հը-

նարավորին չափ փոքր քանակութեամբ խնայելան պա-
հանջների համաձայն»:

Ամենքին հայտնի յե, վոր ԽՍՀՄ վոչ միայն լի-
վին կատարել ե այդ պարտավորութիւնները, այլև
մինչև իսկ ավելին ե արել, քան պահանջում ե Պորտս
մուտի դաշնագիրը: Այդ նրանից ե յերևում, վոր թեև
Ձին — Սրեկեյան յերկաթուղու վրա, վորի յերկարու-
թիւնը հասնում ե ավելի քան 1700 կիլոմետրի, Խոր-
հրդային Միութիւնը՝ Պորտսմուտի դաշնագրի համա-
ձայն իրավունք ունի պահել ավելի քան 25.000 զորք,
նա կամովին կերպով հրաժարվել ե այդ իրավունքից
և Հյուսիսային Մանջուրիայում մի ղրխոր ել չի պա-
հում: Իսկ Ճապոնիան: Բաւական ե ամենաթուզիկ
մի հայացք ձգելու Պորտսմուտի դաշնագրի վերահիշ-
յալ հոգւածների վրա, վորպեսզի հավաստենք, թե
նրանք միանգամայն մոռացված են Ճապոնիայի կող-
մից և վոչ մի կերպով չեն պահպանվում Մանջուրիա-
յում:

Ինչ վերաբերում ե չհարձակման պայմանագրին,
ապա պետք ե համաձայնվել պ. Հիրոտայի հետ վոր
լոկ չհարձակման պայմանագիր կնքելը չի լուծում Հե
ռալոր Սրեկեյում խաղաղութիւնն ապահովելու հար-
ցը: Իրա հետ միասին չի կարելի չխոստովանել, վոր
այդպիսի պայմանագիր կնքելուց հրաժարվելը չափա-
ղանց բացասական յերևույթ ե պետութիւնների իրար
մեջ ունեցած հարաբերութիւններում, վորովհետև նը
ման հրաժարումը չի նպաստում հավատ ամրապնդե-
լու դեպի այն յերկրի խաղաղ դիտավորութիւնները,
վորը հրաժարվում ե իր վրա չհարձակման պարտաւո-
րութիւններ վերցնելուց:

Յես անհրաժեշտ եմ համարում կանգ առնել հո-
մաղումարում առանձին ընկերների ունեցած յեղութ-
ների վրա: Այդ ճառերի բովանդակութիւնը հաստա-
տում ե այն, ինչ յես ասել եմ իմ գեկուցման մեջ:

Մասնանշում եմ միայն դրող Ալիքեյենկոյի ճարը,
վոր կենդանի որինակներով, յերեք մարդկանց որինա-
կով, վառ չնշանց սոցիալիզմի համար մեր մղած պայ-
քարի դժվարութիւններն ու մեծ նշանակութիւնը և,
դրա հետ միասին՝ նվիրվածութիւնը խորհրդային իշ-
խանութեանն ու սերը՝ դեպի մեր կուսակցութիւնը,
դեպի ընկեր ՍՏԱԼԻՆԸ՝ սեր, վորով համակված են աշ-
խատավորների բարձրագոյն մասսաները (ծափահա-
րութիւններ):

Հիշաւի, մեծ են վերջին տարիներս մեր յերկրում
տեղի ունեցած փոփոխութիւնները:

Սրանից ստան և յոթ տարի առաջ Լենինն ասել և .
«Սոցիալիստական Խորհրդային հանրապետութիւն»
արտահայտութիւնը խորհրդային իշխանութեան վրճ-
ոսականութիւնն և ցույց տալիս սոցիալիզմին անցնե-
լու դործն իրականացնելու վերաբերմամբ և վոչ թե
ներկա տեսեալով կարգերի ընդունումը, վորպես
սոցիալիստական»: Այն ժամանակվանից մեր յերկրի
արմատական կերպարանափոխութիւնն ե կատարվել
սոցիալիզմի հաղթանակի հիման վրա, փոխվել ե նրա
կերտմիկան և նրա սոցիալական կառուցվածքը: Փոխ
վել ե ժողովրդական մասսաների կյանքը և, յեթե լսով
նայենք, այժմ մենք ապրում ենք նոր աշխարհում,
բոլորովին նոր պայմաններում:

Մեր արդիւնաբերութիւնն ուրիշ արդիւնաբե-
րութիւն ե դարձել: Յերկիրն ինդուստրալիզացի-
յե յենթարկվել նրա աճի հիման վրա: Գիտական տը-
տեսութիւնը վերակառուցվել ե նոր հիմքերով, կո-
րեկտիվով նոր տեխնիկայի հիմքերով: Մենք ժո-
ղովրդական տնտեսութեան ահագին վերելքի յեղք հա-
տել, վորը հենց այն պատճառով ե անշեղ առաջ ընթա-
ցել ու ընթանում, վոր նրա զարգացման հիմքն ե
հանդիսանում նոր կարգերի հաղթանակը:

Սոցիալիզմի հաղթանակը, վոր հանրալին սեփա-

կանութեան հաղթանակն և նշանակում, արժանապետ փոխել և մեր յերկրի դեմքը, մեր պետութեան դատա-
կարգային կառուցվածքը և սոցիալական հարաբերու-
թյունները: Ինչքան ել դատակարգային թշնամին իր
հին դիրքից և կառչում, մեր շինարարութիւնը քան-
դում և հին հասարակութեան ամեն մի հիմք, նրանց
փոխարինելով նոր, սոցիալիստական հարաբերութիւն
ներով՝ նոր գիտակցից կարգապահութեան հիմունքով:
Վերակառուցվում և աշխատամիտները կյանքը, կեն-
ցաղն ու պայմանները, արագութեամբ բարձրանում և
խորհրդային կուլտուրան, կինը դեպի նոր կյանք-
ի բարձրանում, աճում և խորհրդային յերիտասարդու-
թյունը: Մեր խորհրդային մարդիկ նոր ու նոր հերոս
ներ են տալիս:

Միայն լարված պայքարը չէ, փոր մղվում և մեր
ամբողջ կյանքի դրվածքի վերակառուցման համար:
Նոր ու նոր շենքեր են վեր յենում պայքար մղելու
քնութեան դեմ, նրան տիրապետելու համար:
Արկաթեկան նվաճելու դործում մեր ունեցած հա-
ջողութիւններն ու Արկաթեկայի խորհրդային համար-
ձակ մարդկանց և հերոսների անունները հայտնի յեն
չատ միլիոնների: Այստեղ ևս տարածված են առաջին
հաղթանակները, փոր ուժերից վեր ելին հին աշխար-
հի մարդկանց համար, սակայն փորոնց խորհրդային
մարդիկ միայն յերակետ են դարձնում իրենց հետագայ
և ել ամբիջ խաշոր հաջողութիւնների համար: Խորհր
դային մարդիկ աչքի ընկնող տեղ են դրաւել ստրա-
տոսֆերան նվաճելու պայքարում: Յեւ բարձունքները
գրավելու այդ փառափոր պայքարում մենք տեսնում
ենք մեր ուժերի և մեր մեծ ձգտումների աճման ար-
տահայտութիւնը:

Դեռ յերիտասարդ և խորհրդային յերկիրը և նա
միայն մոտեւրջա նոր ուժերի աճման խոկական ուղին
բաց արաւ: Մեր ճանապարհի վրա դեռ քիչ դժվարու-
թյուններ չկան և դեռ մեծ են կապիտալիզմի մնա-

ցորդները մեր յերկրում: Դրանք դեռ ևս դոյութիւն
ունեն Խորհրդային Միութեան և կոնտիկալում և սո-
ցիալական կառուցվածքում: Դրանք առանձնապես կեն
սունակ են մարդկանց գիտակցութեան մեջ և դեռ յեր
կար պետք և իրենց զգացնել տան: Դատակարգային
թշնամին դեռ ևս ցած չի դրել իր գեղը և վորքան
անհուսալի յե նրա դործը, նույնքան հուսահատական
են դառնում կորստյան մատնվածների փորձերը:...

Սակայն մենք գիտենք մեր ուղին և միջին վերջ
հալատացած ենք մեր դործի ճշմարտութեանը:

Այդ ուղիով, Լենինի-ՍՏԱԼԻՆԻ կուսակցութեան
գրովի տակ՝ մենք գնում ենք դեպի նոր և մի ամբի-
ջ մեծ հաղթանակներ (բուն ծափահարութիւններ,
վոր անցնում և յերկարատե ովացիայի. աղաղակներ,
— «կեցցե մեր առջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ, կեցցե ընկ.
Մոլոտովը»:



**ԽՍՀՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 7-ՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Լսելով ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընկ. Վ. Մ. Մոլոտովի հաշվետու զեկուցումը ԽՍՀ Միության կառավարության գործունեության մասին, ԽՍՀ Միության Խորհուրդների 7-րդ համագումարը վերաշուրջում է.

1. Հավանություն տալ ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընկ. Վ. Մ. Մոլոտովի հաշվետու զեկուցմանը:

2. Ամբողջապես և լիովին հավանություն տալ ԽՍՀ Միության արտաքին և ներքին գաղափարաբանությանը և գործնական աշխատանքներին:

ԽՍՀՄ Խորհուրդների 7-րդ համագումարի
նախագահ — Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Խորհուրդների 7-րդ համագումարի
քարտուհար — Ա. ՅԵՆՈՒԿԻՉԵ

ՄՈՍԿՎԱ, Կրեմլ

31 հունվարի 1935 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0217797

40.285

40 417.

В. М. МОЛОТОВ

ОТЧЕТНЫЙ ДОКЛАД
О РАБОТЕ ПРАВИТЕЛЬСТВА
VII СЪЕЗДУ СОВЕТОВ

ПАРТИЗДАТ 1935 БАКУ